




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՔԱՐԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

N 187 26 հոկտեմբերի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 21-Ա,
թիվ 22-Ա և թիվ 23-Ա որոշումները:
Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար՝



Հ. Ռոստոմյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

20 հոկտեմբերի 2021թ.


ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 68-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Քարաձոր համայնքում 2021 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած աճուրդի թիվ 1 արձանագրությունը և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Լոուու մարզի Քարաձոր համայնքում 19.10.2021 թվականին կայացած աճուրդի թիվ 1 արձանագրությունը:
2. Աճուրդում հաղթող ճանաչված «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին ի դեմս տնօրեն Վահագն Վաչագանի Գևորգյանին սեփականության իրավունքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող 06-109-0202-0002 ծածկագրով 0.344834 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, աճուրդում առաջարկված առավելագույն 572 000 ՀՀ դրամ գնով:
3. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ ի ի դեմս տնօրեն Վահագն Վաչագանի Գևորգյանի կողմից աճուրդում առաջարկված՝ գինը 900245175238 (Քարաձոր համայնքի հողի օտարումից եկամուտներ) հաշվեհամարին վճարելուց հետո կնքել հողամասի առավաճառքի պայմանագիր:
4. Հողամասը պետական գրանցում կատարելու համար կատարվող ծախսերը իրականացնել գնորդի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գրաստան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 22-Ա
20 հոկտեմբերի 2021թ.

ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


Հինք ընդունելով Քարաձոր համայնքի ավագանու 09.09.2021 թվականի 25 որոշումը , մրցույթի կազմակերպման և անցկացման մասին 19.10.2021 թվականի արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի 67 և 68 հոդվածներով`

Որոշում եմ.

1.Քարաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ՝ 2021 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթում հաղթող ճանաչել
Արսեն Աղասու Կարապետյանին 06-109-0119-0011 ծածկագրի տակ գտնվող 3.836484 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նկատմամբ տարեկան 23100 (Քսաներեք հազար մեկ հարյուր) դրամ վարձավճարով:

2.Մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ կնքել վարձակալության պայմանագիր 25 տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՌՈՍՏՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ա
20 հոկտեմբերի 2021թ.

ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Քարաձոր համայնքի ավագանու 09.09.2021 թվականի 25 որոշումը , մրցույթի կազմակերպման և անցկացման մասին 19.10.2021 թվականի արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի 67 և 68 հոդվածներով`

Որոշում եմ.

1.Քարաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ՝ 2021 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթում հաղթող ճանաչել

Արսեն Աղասու Կարապետյանին 06-109-0105-0073 ծածկագրի տակ գտնվող 0.278615 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նկատմամբ տարեկան 3150 (երեք հազար մեկ հարյուր հիսուն) դրամ վարձավճարով:

2.Մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ կնքել վարձակալության պայմանագիր 25 տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Յ. ՌՈՍՏՈՍՅԱՆ